

**ՀՀ ֆինանսների նախարարություն**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/3**

**8 հուլիսի 2014 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Արմենուիի Բարսեղյանի 30.06.2014 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 18.06.2014 թ-ի թիվ 260103 որոշման դեմ:

**Ա/Ձ Արմենուիի Բարսեղյանի գանգատում բերված փաստարկները.**

Ա/Ձ Արմենուիի Բարսեղյանը հայտնում է, որ զբաղվել է հանրային սննդի իրականացման գործունեությամբ և համարվել է արտոնագրային վճար վճարող: ՀԴՄ-ն հաշվառումից հանված է 2013 թ-ի դեկտեմբեր ամսին:

Ա/Ձ Արմենուիի Բարսեղյանը 2013 թ-ի 4-րդ եռամսյակի հաշվետվությունները հանձնվել են և քանի որ ունեցել է ապրանքային մնացորդ վաճառել է ու 2013 թ-ի 4-րդ եռամսյակում հանձնել է նաև շրջանառության հարկի հարշվարկ: 2013 թ-ի վերջում չի ունեցել նաև աշխատողներ:

Հայաստանից բացակայելու պատճառով Ա/Ձ Արմենուիի Բարսեղյանը 2014 թ-ի մարտ ամսին լուծարել է անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականը և համապատասխան փաստաթղթերը ներկայացրել է Կենտրոնի ՀՏ: Մեկ անգամ . ծանուցագիր ստանալով ներկայացել է հարկային տեսչության իրավաբանական բաժին և այն հարցին, թե ինչու չի ներկայացվել 2014 թ-ի 1-ին եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը, Ա/Ձ Արմենուիի Բարսեղյանը պատասխանել է, որ չի աշխատել նշված հարկատեսակով, որի պատճառով չի ներկայացրել շրջանառության հարկի հաշվարկը: Այնուհետև, Արմենուիի Բարսեղյանը ստացել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 18.06.2014 թ-ի թիվ 260103 որոշումը, որով նշանակվել է տուգանք՝ գումարով 20.000 դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ Արմենուիի Բարսեղյանը խնդրում է, որպեսզի սույն գործով կայացվի արդարացի որոշում:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Արմենուիի Բարսեղյանը զբաղվել է հանրային սննդի գործունեությամբ և մանրածախ առևտրով: Հետևապես, համարվել է և արտոնագրային վճար վճարող, և շրջանառության հարկ վճարող:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ Ա/Ձ Արմենուիի Բարսեղյանի կողմից 04.12.2013 թ-ին Կենտրոնի ՀՏ է ներկայացվել հայտարարություն՝ գործունեությունն անորոշ ժամկետով դադարեցնելու վերաբերյալ: Այնուհետև 11.03.2014 թ-ին Ա/Ձ Արմենուիի Բարսեղյանը դադարեցրել է գործունեությունը:

Քննարկվող դեպքում 2014 թ-ի 1-ին եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը չներկայացվելու համար ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 18.06.2014 թ-ի թիվ 260103 որոշմամբ Ա/Ձ Արմենուի Բարսեղյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամ:

Հանձնաժողովը գտնում է, որ 2014 թ-ի 1-ին եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը չներկայացվելու հիմքով Ա/Ձ Արմենուի Բարսեղյանը չէր կարող ենթարկվել վարչական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30 սեպտեմբերի 2008 թ-ի «Հարկ վճարողների (ապահովագրիչների) կողմից գործունեություն չիրականացնելու դպքում հարկային մարմինն հաշվարկների, հաշվետվությունների և հայտարարագրերի ներկայացման վերաբերյալ» թիվ 9 պաշտոնական պարզաբանման 4-րդ կետի համաձայն. «Եթե հարկ վճարողը (կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր, նոտար) փաստացի չի իրականացնում գործունեություն (այդ թվում նաև՝ չի հանդիսանում գործատու կամ հարկային գործակալ), ապա՝ այդ ժամանակահատվածում ներառվող՝ հարկատեսակների համար օրենքով սահմանված լրիվ հաշվետու ժամանակաշրջանների համար հարկ վճարողն իր հաշվառման վայրի հարկային տեսչություն հաշվետվություններ (այդ թվում՝ «գրոյական») չի ներկայացնում»:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Արմենուի Բարսեղյանի կողմից 04.12.2013 թ-ին Կենտրոնի ՀՏ է ներկայացվել հայտարարություն՝ գործունեությունն անորոշ ժամկետով դադարեցնելու վերաբերյալ: Ընդ որում, սույն գործում առկա չէ որևէ հիմնավոր ապացույց այն մասին, որ 04.12.2013 թ-ի հայտարարությունը ներկայացնելուց հետո մինչև գործունեության դադարեցնելը Ա/Ձ Արմենուի Բարսեղյանը փաստացի գործունեություն է իրականացրել: Հետևապես, ղեկավարվելով վերոգրյալ պաշտոնական պարզաբանման 4-րդ կետի դրույթներով, 2014 թ-ի 1-ին եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը չներկայացվելու հիմքով Արմենուի Բարսեղյանը չէր կարող ենթարկվել վարչական պատասխանատվության:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո ր ո շ ու մ է՝**

Բեկանել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 18.06.2014 թ-ի թիվ 260103 որոշումը, իսկ գործը կարճել:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**